ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ

«ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ИНСТИТУТ ТЕАТРА И КИНО»

«YEREVAN STATE INSTITUTE OF THEATRE AND CINEMATOGRAPHY» SNCO

N 10-03/ղ

12.05.2014թ.

Հարգելի Մասնակիցներ

«ԳԱԿ-ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել տպագրական աշխատանքներ:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Ամիրյան 26 հասցեով, Ա.Մաղաքյանին, մինչև 2014թ. մայիսի 22-ը ժամը 12:00-ն ներառյալ:

Հայտերը կբացվեն «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի շենքում, ք. Երևան, Ամիրյան 26 հասցեով, 2014թ. մայիսի 22-ին ժամը 12:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը և օրենքով սահմանված այլ փաստաթղթեր: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ anania-2011@mail.ru:

Առդիր՝ 8 /ութ/ թերթ:

Հարգանքով

Պրոռեկտոր՝ Հ. Մինասյան

Կատարող՝
Գնումների համակարգող
Ա.Մաղաքյան հեռ. (010) 53 82 92

Հավելված 1
«ԳԱԿ- ՇՀԱՇՁԲ-11/3 » ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N « ԳԱԿ-ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից N *« ԳԱԿ-ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3»* ծածկագրովհայտարարված ընթացակարգի_____ _____չափաբաժնին (չափաբաժիններին)[1]

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:
----------ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

----------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

----------:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

---------- ----------

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

§«---------| ---------- 2014.թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N « ԳԱԿ -ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ,N *« ԳԱԿ -ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3* ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/ /մեկ միավորի/
1	*2*	*3*	4	5=3+4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
4	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
...	...			
...	...			

***3-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
*** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. S.

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՆԱԽԱԳԻԾ

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ

N «ԳԱԿ-ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3»

ք. Երևան «____» _____ 2_____թ.

«_____պատվիրատուի անվանումը_____», ի դեմս _____ յանի, որը գործում է _____ _____ կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և _____ ...-ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____-ի (այսուհետև՝ Մատակարար), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված _____ (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Մատակարարն Աշխատանքը հասցնում է Գնորդին:

2.2 Աշխատանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Մատակարարը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Աշխատանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Աշխատանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը.

3.1.3 Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Աշխատանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև `ն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Մատակարարն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Աշխատանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Աշխատանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Աշխատանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Աշխատանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Մատակարարի հանձնած Աշխատանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Աշխատանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Աշխատանքների քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Աշխատանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Մատակարարն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Աշխատանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Մատակարարը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Աշխատանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Աշխատանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Աշխատանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Աշխատանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Աշխատանքի քանակի հաշվին:

3.4 Մատակարարը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Աշխատանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Աշխատանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Աշխատանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Աշխատանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Աշխատանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.7 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.8 Գնորդին հանձնել Աշխատանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.9 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Աշխատանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է՝ ..... (..... .....) ՀՀ դրամ, ***ներառյալ ԱԱՀ***-ն: Աշխատանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Աշխատանքի որակը և երաշխիքը

5.1 Մատակարարը երաշխավորում է մատակարարված Աշխատանքի որակի համար:

5.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Մատակարարը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Աշխատանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Մատակարարի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Մատակարարը՝ Աշխատանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Մատակարարի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Աշխատանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Մատակարարի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Մատակարարին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Աշխատանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Մատակարար և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Մատակարարի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 5 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
---	---
---	---
---	---
---	---
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
«_____» _____ 2_____թ. կնքված
«ԳԱԿ-ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3» պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Աշխատանքի անվանում	Չափման միավոր	Տեխնիկական բնութագիր
1.	Ուսումնական մատյանի տպագրություն	հատ	Թուղթ օֆսեթ՝ 80գ/մքառ., շապիկը-ֆ/բորդ՝ 300գ/մքառ., A4, 100 էջ, անուն, ազգանունի ականջակ ամրացված լիդերինով
2.	Հանդես-15 պարբերականի տպագրություն	հատ	Թուղթ օֆսեթ՝ 80գ/մքառ., շապիկը-կավիճ՝ 300գ/մքառ., գունավոր, 250 էջ (24*17) սմ/սմ
3.	Դիպլոմի ներդիրների տպագրություն 2013-2014	հատ	Թուղթը կավճապատ՝ 150գ/մքառ., շապիկը՝ գունավոր/ԲՈՒՀ-ի լոգոն, մուտքագրում, էջադրում/, 40 էջ, A5
4.	Ընդունելության տեղեկագրերի տպագրություն	հատ	Թուղթը կավճապատ՝ 130գ/մքառ., շապիկը-կավիճ՝ 300գ/մքառ., գունավոր, 48 էջ, A5
5.	Ազդագրերի տպագրություն	հատ	A3 գունավոր, կավճապատ, 130գ/մքառ., լոգո
6.	Հրավիրատոմսերի տպագրություն	հատ	A5 և A4 գունավոր, երկկողմ, կավճապատ, 200գ/մքառ., լոգո
7.	Գրադարանային բլանկների տպագրություն	հատ	օֆսեթ՝ 80գ/մքառ. և ֆ/բորդ՝ 200գ/մքառ.,
8.	Տետրերի տպագրություն	հատ	ԲՈՒՀ-ի գունավոր լոգոյով, թուղթ օֆսեթ՝ 80գ/մքառ., շապիկը-կավիճ՝ 150գ/մքառ., գունավոր, A5

ԳՆՈՐԴ

(ստորագրություն)
Կ.Տ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
«.....» ..... 2.....թ. կնքված
«ԳԱԿ-ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3» պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հ/հ չափաբաժին	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Միավորի միջին գինը	Նախատեսվում է գնել 2014 թվականին								Ընդամենը	
				I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	Ուսումնական մատյանի տպագրություն	հատ		-	-	70		70		60		200	
2	Հանդես-15 պարբերականի տպագրություն	հատ		-	-	50		50		50		150	
3	Դիպլոմի ներդիրների տպագրություն 2013-2014	հատ		-	-	180		180		160		520	
4	Ընդունելության տեղեկագրերի տպագրություն	հատ		-	-	100		100		100		300	
5	Ազդագրերի տպագրություն	հատ		-	-	170		170		160		500	
6	Հրավիրատոմսերի տպագրություն	հատ		-	-	170		170		160		500	

7	Գրադարանային բլանկների տպագրություն	հատ		-	-	3500		3500		3000		10000	
8	Տետրերի տպագրություն	հատ		-	-	1000		1000		1000		3000	
ԸՆԴԱՆԵՆԸ		-		-	-	5240		5240		4690		15170	

*Աշխատանքի մատակարարման ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագիր կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուի հետ պայմանագիր կնքող անձը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

ԳՆՈՐԴ

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«.....» ..... 2.....թ. կնքված
«ԳԱԿ-ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3» պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N ը/կ	Աշխատանքի անվանումը	Ֆինանսավորման գումարը «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 2014թ-ին նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում								
		մարտ	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
1.	Տպագրություն	15%	30%	40%	55%	70%	80%	90%	100%	100%

ԳՆՈՐԴ

(ստորագրություն)
Կ.Տ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
«.....» ..... 2.....թ. կնքված
«ԳԱԿ-ԵԹԿՊԻ-ՇՀԱՇՁԲ-11/3-14/3» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«.....» ..... 2.....թ.
Պայմանագրի անվանումը՝ «.....»:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «.....» ..... 2.....թ
(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)
Պայմանագրի համարը՝ .....

Գնորդն, ի դեմս ..... և Մատակարարն՝ ի դեմս ....., հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի (Համաձայնագրի) կատարման վերաբերյալ «.....» ..... 2.....թ կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N..... եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով (Համաձայնագրով) ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Մատակարարը «.....» ..... 2..... թ.-ից «.....» ..... 2.....թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են: